

Անուշ Ռ. Հովհաննիսյան

ՔԵՄԱԼ ԱԹԱԹՈՒՐՔԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Թուրքական փաստաթղթերի և հրապարակումների լուսաբանմամբ*

1. Հայերի ունեզրկման փաստը քողարկելու վերջին փորձերը

2005 թ. Թուրքիայի կադաստրային վարչությունը ձեռնամուխ եղավ իր գերատեսչության շրջանակում գտնվող օսմանյան շրջանի փաստաթղթերի թուրքացման, թվայնացման, իսկ հետագայում՝ Պետական գլխավոր արխիվային վարչությանը հանձնելու TARBIŞ ծրագրին:

Այդ աշխատանքներն իրականացնելու ընթացքում ի հայտ էին եկել որոշ փաստաթղթեր, որոնց մասին վարչությունը տեղեկացրել էր Ազգային անվտանգության խորհրդին: 2005 թ. օգոստոսի 26-ին գաղտնի նամակով ԱԱԽ Ջինակոչի և պատերազմական գործողությունների նախապատրաստման ու պլանավորման բաժնի ղեկավար, բրիգադային գեներալ Թայյար Էլմասը հայտնում էր, որ մատյաններում առկա տեղեկությունները կարող են տեղիք տալ «ցեղասպանության անհիմն պնդումների», օսմանյան վակուֆների պահանջների և նմանատիպ այլ անցանկալի շահարկումների: Ուստի նպատակահարմար է այդ նյութերը գաղտնի պահել և սահմանափակ անձանց կողմից օգտագործման իրավունք տրամադրել¹:

Տեղեկատվական արտահոսքի հետևանքով այս լուրը հայտնվել էր որոշ թուրքական թերթերի էջերում, պարզաբանելով, որ մատյաններում նշված են, անուն առ անուն, այն մարդկանց ցուցակները, որոնք անշարժ գույքի տեր են եղել Թուրքիայում՝ նախքան 1915 թ. դեպքերը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ օսմանյան պետությունում դարերի ընթացքում մշակվել էր ռայաներից հարկ հավաքելու նպատակով մանրակրկիտ գրառումներ կատարելու պրակտիկան, կարելի է չկասկածել, որ հայտնաբերված

* Վերջին տարիներին թուրք հետազոտողները տարբեր հարցերի հետ կապված՝ հաճախ այնպիսի խոսույն վավերագրեր են հրապարակում, որ դրանց համեմատական քննությունը բացահայտում է մեր ժողովրդի հանդեպ ոչ միայն երիտթուրքերի, այլև Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների իրականացրած հանցագործությունների առարկայական պատկերը: Ներկա հրապարակումը նվիրված է Թուրքիայում հրապարակված փաստաթղթերի միջոցով Քեմալ Աթաթուրքի հանցավոր քայլերի լուսաբանմանը, իսկ հաջորդը լինելու է Իսմեթ Ինյունյուլի դրսյեն: Խմբ.: Հոդվածն ընդունվել է տպագրության 2. 03. 2011: 1 Տե՛ս «Osmanlı arşivleri açılırsa resmi tez zayıflar», www.ulkucuderlerbize.com/forum/-t-5363.0.html

ցուցակները իրոք «վտանգ» էին ներկայացնում արդի Թուրքիայի համար:

Ի դեպ, այս կապակցությամբ երիտասարդ հետազոտողների մի խումբ դիմել էր Հոդի և փախստականների տեղավորման վարչության (Toprak ve Iskan Genel Müdürlüğü) արխիվ՝ անհրաժեշտ տվյալներ ստանալու նպատակով: Դիտարկվել էին Քիլիս, Անթաքիա, Իդլիբ - Ջիսր-ի Շուգուր (Kilis, Antakya Idlib - Cisir-i Şugur) բնակավայրերի տեղական արխիվային նյութերը: Նրանցում բազմաթիվ երկրորդական փաստաթղթերի կողքին առկա էին նաև նշումներ կոնկրետ ունեցվածքի մասին (կով, արաղաց, կոշիկ, կահկարասի և այլն), սակայն բացակայում էին վերջիններիս տերերի անունները²:

Այս բացահայտումների արդյունքում հայերի լքյալ գույքի թեման Թուրքիայում հանրային քննարկման առարկա դարձավ:

2. Հարցի նախապատմությունը

Հայտնի է, որ պատմության արդի հանգրվանում հայերի սեփականության վերադարձի խնդիրն առաջին անգամ բարձրաձայնվել է 1984 թ. Ժողովուրդների Մշտական տրիբունալում՝ Տիգրան Քույումջյանի «Հայոց սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» զեկույցում³: Վերջինս հիշատակում էր, որ հայերի բանկային հաշիվներից գոյացած շուրջ 30.000 կգ ոսկին (5 մլն. թուրքական ոսկե լիրա), ըստ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ջեյմս Բոլդվինի՝ վարչապետ Մակ-Դոնալդին ուղղված զեկույցագրի, թուրքերի կողմից ուղարկվել էր Գերմանական կայզերական բանկ (Reichsbank-Berlin): Այսօր այդ գումարը կկազմեր 320.000.000-ից ավելի ԱՄՆ դոլար՝ գումարած տոկոսները⁴:

Բացի բանկային հաշիվների բռնագրավումից, Թուրքիայի կառավարությունը փորձ է արել տիրանալ նաև հայերին պատկանող այլ արժեթղթերի, մասնավորապես՝ ապահովագրական վկայականներով նախատեսված գումարներին: 1916 թ. Թալեաթ փաշան ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի հետ զրույցում հարցնում էր, թե կարո՞ղ է արդյոք վերջինս իրեն ներկայացնել ամերիկյան ապահովագրական ընկերություններում ընդգրկված հայերի ցուցակը: «Նրանք բոլորը մահացել են, չթողնելով ժառանգներ», «ուրեմն այդ ապահովագրերի գումարները օրինաբար պետք է անցնեն օսմանյան պետությանը»⁵,-եզրակացնում էր նա: Միևնույն ժամանակ, օսմանյան կառավարությունը հայտարարություններով դիմել էր այլ ընկերությունների՝ հայերի անունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու խնդրանքով: Մանրամասն տեղեկություններ էին հավաքվել, թե ինչպիսի սեփականություն ունեին հայերը՝ դեպոզիտ, ապահովագրեր, արժեթղթեր, տներ, հողային կալվածքներ, գործարաններ, խանութներ, ընկերություններ⁶:

Սակայն, եթե Օսմանյան կայսրության հայերի համայնքային սեփականու-

2 St' u Sait Çetinoğlu, §Ermeni Emval-i Metrukeleri Üzerine-1', www.norzartonk.org/xml rpc.php?rsd
3 Ջեկույցի լրամշակված տարբերակը տե՛ս Dickran Kouymjian, «Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidale Process», http://armenianstudies.csufresno.edu/=text/css
4 St' u Dickran Kouymjian, Confiscation of Armenian Property...
5 Henry Morgenthau, Memoires, Paris 1919, p. 292.
6 St' u Kévork Baghđjian, La confiscation, par le gouvernement turc, des biens arméniens... dits «abandonnés», Montreal, 1987, pp. 270-280.

յան մասին տեղեկությունները հայտնի են, ապա անհատական սեփականության հաշվառումն այսօր շատ դժվար է⁷:

Փարիզի խաղաղության կոնֆերանսում հայկական պատվիրակության ղեկավարներ Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան ներկայացրել էին գեկույց «Tableau approximatif des Réparations et indemnités pour les dommages subis par le Nation arménienne en Arménie de Turquie et dans la République Arménienne du Caucase», որում կրած վնասը հաշվարկված էր մոտավորապես 14,5 մլրդ ֆրանկ: 1990 թ. դա կազմում էր մոտավորապես 100 մլրդ դոլար⁸:

1915 թ. հունիսին «Տեղահանության մասին» օրենքի հրապարակումից անմիջապես հետո, արձակվել էր վարչական կարգադրություն՝ պատերազմական և արտակարգ քաղաքական իրավիճակի պատճառով տեղահանված հայերի լքյալ շարժական և անշարժ գույքի վերաբերյալ (Emvali-i Metruke Kanunu):

Համաձայն վերը նշված կարգադրության, տեղական մակարդակով հատուկ հանձնաժողովներ էին կազմվելու՝ երկու վարչական (mülkiye) և մեկ ֆինանսական (maliye) ներկայացուցիչներից, որոնք պետք է մանրամասն գույքագրեին հայերի ունեցվածքը (3 օրինակից): Պատճեններից մեկը տրվում էր գույքի տիրոջը, մյուսը պահվում էր տեղական համայնքում, որպես կանոն՝ եկեղեցում, իսկ երրորդը ուղարկվում էր Օսմանյան պետական գանձարան: Ի թիվս այլ հանգամանքների՝ այս իրողությունը դարձավ եկեղեցիները հարձակումների, հրկիզումների առաջին թիրախի վերածվելու պատճառներից մեկը: Այդպիսի թղթեր հայերին տրվեցին և նրանց շարժական գույքը՝ անասուններ, կահկարասի և այլն, վաճառվեց աճուրդով և գումարները դրվեցին հայերի անունով: Հետագայում այս պաշտոնական գրություններից հրատարակել է Յուսուֆ Հալաջօղլուն՝ «Թուրքական պատմական ընկերության» նախկին նախագահը, փորձելով ցույց տալ, թե որքան «հոգատար» է եղել օսմանյան կառավարությունը տեղահանվող հայերի նկատմամբ: Ի դեպ, տեղահանման ծախսերը ևս կատարվում էին նույն՝ տեղահանվածների հաշվին⁹:

Սակայն դրանից 4 ամիս անց՝ 1915 թ. սեպտեմբերի 26-ին, հրապարակվում է նոր հրամանագիր, որով կարգավորվում էր աճուրդից դժգոհ անձերի՝ հանձնաժողովների գործողությունները բողոքարկելու և ունեցվածքն ըստ պահանջի ետ ստանալու կարգը, որի համար նախատեսված էր 15 օր:

Օրենքում, իհարկե, նշված չէր, թե ինչպես կարող էին Դեր-Չոր քվածները կամ սպանվածները հետևել այդ ընթացակարգին: Այսպես՝ Սարգիս Չերկեզյանը իր «Աշխարհը բոլորիս է բավարար» գրքում հուշագրություն է գետեղել, որի համաձայն՝ Քարամանում իր ունեցվածքին տեր կանգնել ցանկացած իր հորը՝ Ղազարոսին, փաստաբանը երկու ճամփա է ցույց տվել՝ կամ լռել, կամ կախաղան

7 1912-13 թթ. Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության հանձնարարությամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը կազմել և կառավարությանն էր ներկայացրել կայսրության տարածքում գտնվող հայկական վանքերի և եկեղեցիների լիակատար ցուցակը: 1992 թ. դոկտոր Ռայմոն Գևորգյանը հրապարակել է առավել ամբողջական ցուցակ, որում նշվում էին, չհաշված Կ. Պոլիսը՝ 2538 եկեղեցի, 451 վանք և 2000 կրթօջախ: Ցուցակի մեջ չի մտնում Հայ Կաթոլիկ և Հայ Բողոքական եկեղեցիների պատկանող գույքը: Տե՛ս Ա. Սաֆրաստյան, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրությանը ներկայացված եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913), «Էջմիածին», Ա (հունվար), 1965, էջ 42; Raymond H. Kévorkian et Paul B. Paboudjian, Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du Génocide, Paris, Arshis, 1992, pp. 57-60.

8 Տե՛ս Kévork Baghdjian, La confiscation, par le gouvernement turc..., p. 279.

9 Տե՛ս Yusuf Halacoğlu, Facts, Relating to the Armenian Displacement (1915), TTK Publication, Ankara, 2001.

քարձրանալ¹⁰:

Իրականում հայերին պատկանող գույքի թալանը տեղի էր ունենում տեղն ու տեղը. գորգերը, արծաթյա և ոսկե իրերը, հագուստը ոստիկաններն ու ժանդարմներն էին վերցնում, մանր կահկարասին՝ տեղի խուժանը: Որոշ դեպքերում աճուրդ իսկապես իրականացվում էր, բայց գոյացած գումարը իշխանավորներն իրենք էին գրպանում, այլ ոչ թե դնում հայերի հաշվին: Ջավեշտական պատկեր է ներկայացրել արաբ Ֆայեզ ալ Ղոսեյնը. 5 լիրա արժեք ունեցող կոստյումը վաճառվում էր 2 մեջիդիեյով, թանկարժեք սպասքը՝ մանրադրամ արժեք, իսկ հին արժեքավոր դաշնամուրը որևէ մեկը չէր գնում: Մանրանկարներով զիրքը տրվեց պանրավաճառին՝ շուկայում վաճառելիս պանիր փաթաթելու համար¹¹: Անշարժ գույքը օգտագործվելու էր պետության հայեցողությամբ, իսկ երբեմն տրվում էր բանակին, որպես կայանատեղի, դառնում էր հոսպիտալ, պահեստ, կամ էլ Բալկաններից տեղահանվածներին տեղավորում էին հայերի տներում:

3. Հայերի ունեզրկման համառոտ պատմությունը

Պետք է նշել, որ հայերի, ինչպես նաև հույների սեփականությանը տիրանալու ծրագրերը կազմվել էին շատ ավելի վաղ: 1908-1909 թթ. օսմանյան ֆինանսների նախարարության տվյալներով՝ Թուրքիայի պարտքը գերազանցում էր բյուջեի 1/3-ը: Իսկ Բալկանյան պատերազմները վերջնականապես քամեցին բյուջեն, Թուրքիան զրկվեց իր հարկատու շատ տարածքներից: Դրան հետևեց եռյակի հեղաշրջումը՝ 1913 թվականին, որոնք ամեն ինչ առան իրենց ձեռքը: Նրանք սկսեցին իրականացնել Ջիյա Գյոքալփի նախանշած «milli iktisad»-ը՝ տնտեսության թուրքացման ծրագիրը: Ծխախոտի, շաքարի մենաշնորհի վերահսկումը նրանց աստղաբաշխական եկամուտներ ապահովեց: Հատուկ հանձնաժողովներ ստեղծվեցին, որոնք թիրախային խմբերի փորձագիտական ուսումնասիրություններ անցկացրին՝ «ազգայնացումը» արագ իրագործելու համար: Այդ ծրագրի համակարգողն էր Շյուքրյու Քայան: Պատմության ապագա կեղծարար Էսաթ Ուրասը զբաղվում էր հայերով, Ջելալ Բայարը՝ հույներով, Ջեքերյա Սերտելը՝ ալեվիներով¹²: Այս ծրագրի հեռահար նպատակն էր տնտեսական լծակները վերցնել ալյազգիների ձեռքից: Պատերազմը «նվեր» էր նման ծրագիրն իրականացնելու համար:

Այս նպատակին էր ուղղված, մասնավորապես, Թալեաթ փաշայի 1916 թ. հունվարի 6-ի հրամանագիրը, համաձայն որի՝ հայերի ընկերություններից պետք է ստեղծել մահմեդական կամպանիաներ, վաուչերներ (բաժնետոմսեր) թողարկել և բաժանել «ազնիվ մուսուլմաններին», որպեսզի կապիտալը չընկնի օտարների ձեռքը:

Օրինակ՝ Դիարբեքիրի մետաքսի գործարանի տեր Թրփնջյանը տանջամահ արվեց բանտում, տեղի վելի Նեջդեթը տիրացավ նրա շքեղ տանը, իսկ գործարանը անմիջապես անցավ մուֆտիի որդուն՝ Մուֆթիզադե Հուսեյնին¹³:

10 Տե՛ս Sarkiz Çerkezian, Dünya Hepimize Yeter, Gedik: Belge Yayınları, İstanbul, 2003, s. 59.
11 Տե՛ս Ֆայեզ ալ Ղոսեյն, Ջարդերը Ղայաստանի մեջ (ակամատեսի վկայություններ), Գահիրե, 1960, էջ 25-30:
12 Կազմակերպությունը կղզվում էր «Milli Türk Talebe Birliği», տե՛ս Uğar Üngör, A Reign of Terror..., pp. 20, 61-63.
13 Տե՛ս Uğar Üngör, A reign of Terror: CUP Rule in Diyarbakir Province, 1913-1923, Amsterdam, 2005, pp. 61, 63.

Ի դեպ, երբ Դիարբեքիում հայերի տեղահանությունը իրականացրած դուկտոր Մեհմեդ Ռեշադին հարցնում են, թե արդյոք բժիշկ լինելու հանգամանքը չի խանգարել նրան իրականացնել ոճիրները, նա շատ հանգիստ պատասխանում է. «Ես թուրք եմ, ես պետք է ոչնչացնեմ ոչ թուրքերին, չսպասելով, որ նրանք ինձ ոչնչացնեն և հետո, մի՞թե բժշկի գործ չէ միկրոբներից ազատվելը»¹⁴:

Այդ ճանապարհով Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրության պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմաններին, հետևյալ ամսախաղեպ աճն արձանագրեց. 1913-14 թթ.՝ 35 մլն օսմ. ոսկի, 1915-16 թթ.՝ 38 մլն, 1917-18 թթ.՝ 85 մլն: 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ երիտթուրքական իշխանությունները թողարկեցին 19 մլն օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր: Պարզ է, որ պետական գանձարանը լցվել էր հայերի ինչքի և կալվածքների հաշվին¹⁵:

1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարը նշանավորեց Օսմանյան Թուրքիայի լիակատար պարտությունը Առաջին աշխարհամարտում: Ուստի սուլթան Մեհմեդ VI-ի կառավարման նորանշանակ կաբինետի ներքին գործերի նախարար Ահմեդ Իզզեթ փաշայի 1918 թ. նոյեմբերի 1-ի հրամանագրով նախատեսվում էր հայերից բռնագրավված հողերի և գույքի վերադարձը իրենց օրինական տերերին՝ նրանց վերադարձի և պահանջ ներկայացնելու դեպքում: Այդ հրամանագիրը կարելի է որպես ճակատագրի հեզմանք գնահատել, քանզի այնտեղից, ուր «ուղարկվել էին» հայերը, վերադարձ չկար: Սակայն այն հեռանկարը, որ Եղեռնից մազապուրծ եղած թեկուզև փոքրաթիվ հայությունը կարող է հնարավորություն ստանալ վերադարձնել իր ունեցվածքը, հանգիստ չէր տալիս թուրք ազգայնական ուժերին:

4. Քենալ Աթաթուրքի դերակատարությունը

Հայտնի է, որ պատերազմում պարտվելու պարագայում երիտթուրքերը մշակել էին այսպես կոչված պլան «Բ», այն է՝ դիրքավորվել երկրի ասիական մասում և կոչ անել «ազգային ազատագրական պայքարի»: Այն պետք է իրականացնեին «երկրորդ էշելոնի» իթթիհադականները՝ «Իրավունքների պաշտպանության կոմիտեների» միջոցով: Շարժման ղեկավար դարձավ Քենալ Աթաթուրքը¹⁶:

Նորաստեղծ «շարժումը» մարդկային և նյութական ռեսուրսների խիստ կարիք ուներ: Դեռևս Սվազի համաժողովի ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել որոշ քուրդ առաջնորդների հետ, ի պատասխան նրանց օժանդակության, հետագայում թուրք-քրդական դաշնային պետություն ստեղծելու մասին: Շարժումը համալրվեց նաև երիտթուրքերի դեմ սկսված դատավարություններից խուսափած, փախուստի դիմած հանցագործներով: Անկարայում հրավիրված մեջլիսը 1920 թ. ապրիլին նամակ է հղում Լենինին, որով նյութական օժանդակություն է խնդրում բոլշևիկյան Ռուսաստանից, իսկ 1920 թ. հունիսի 18-ի իր որոշմամբ արձանագրում է հայերի վերադարձին խոչընդոտելու անհրաժեշտությունը

14 Mithat Şükrü Bleda, *Imparatorluğun Çöküşü*, İstanbul, Remzi, 1979, s. 59.

15 Տե՛ս Uğar Üngör, *A Reign of Terror; CUP Rule in Diyarbakir Province, 1913-1923*, Amsterdam, 2005, p. 61, pdf.

16 Տե՛ս Անուշ Դովհաննիսյան, Ցեղասպանության ժխտումը և էթիկան (թուրքական ազգային պետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո), «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV, Եր., 2006, էջ 124-129:

(փաստաթուղթը տե՛ս հավելվածում): Սևրի պայմանագրի (1920 թ. օգոստոսի 10) ստորագրումից հետո, որի 144 հոդվածով նախատեսվում էր անշարժ գույքի վերադարձն իրենց տերերին, քիզնեսի վերականգնումը, բռնագանձված ունեցվածքի վերադարձը¹⁷, «շարժման» կողմնակիցների շարքերը համալրում են նրանք, ովքեր վախճանում էին կորցնել այն ամենը, ինչ դիզել էին հայերին կողոպտելով:

1921 թ. օգոստոսի 7-ին Մուստաֆա Քեմալը՝ որպես «ազգային» բանակի գլխավոր հրամանատար, իր մոտ հրավիրված գաղտնի ժողովի 10 կետից բաղկացած որոշմամբ հրամայում է միջոցներ ձեռնարկել «թշնամու դեմ պայքարը ֆինանսապես ապահովելու նպատակով» և երկիրը թողած անձերի զանձարան անցած գույքը բռնագրավել «բանակի կարիքների համար»¹⁸:

Այս գաղտնի հրամանը ուժի մեջ մտավ 1922 թ. Անկարայի պայմանագիրը ստորագրելուց հետո, երբ ֆրանսիացիները լքեցին Կիլիկիան և «ազատագրված» տարածքում (իսկ իրականում՝ կիլիկիահայության ջարդից հետո) բռնագրավվեց հայերի դեռևս մնացած ունեցվածքը¹⁹:

1923 թվականի ապրիլի 15-ին նախքան Լոզանի պայմանագրի ստորագրումը, թուրքական մեջլիսը օրենք ընդունեց «Լքյալ գույքի» մասին, որով բռնագրավման էր ենթարկվում այն հայերի գույքը, որոնք չէին ապրում Թուրքիայում՝ անկախ այն պարագայից, թե ինչ հանգամանքներում էին թողել երկիրը: Այնուամենայնիվ, Լոզանի պայմանագիրը ամրագրում էր Թուրքիայի քաղաքացի հանդիսացող հայկական փոքրամասնության իրավունքները: Ուստի 1923 թ. սեպտեմբերին փոփոխություն մտցվեց «Ընդհանուր հաշվառման օրենքի» («Mahsub-i Umumi kanunu») 2-րդ կետում, որի համաձայն՝ Կիլիկիայի և Արևելյան վիլայետների հայերին, որոնք «արտագաղթել» էին, արգելվեց վերադառնալ Թուրքիա:

1926 թ. փետրվարի 2-ին օրենք ընդունվեց առ այն, որ վերադարձի ենթակա չէ Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելուց առաջ (1924 թ. օգոստոսի 19-ը) բռնագրավված գույքը:

1927 թ. մայիսին հրապարակվեց կառավարության օրենքը, համաձայն որի՝ Թուրքիայի քաղաքացիություն չէին ստանում բոլոր նրանք, ովքեր չեն եղել երկրի տարածքում «ազատագրական պայքարի» տարիներին, ինչպես նաև արտասահմանում եղածները՝ 1923-ից (Լոզան) մինչև սույն օրենքի (մայիս 1927 թ.) ընդունումը: Այս որոշումները փաստորեն զրոյի հասցրին սեփականության նկատմամբ հայերի պահանջների իրականացման հնարավորությունները: Հայ

17 Սևրի հաշտության պայմանագրի VI «Հայաստան» բաժինն ընդգրկում էր 88-93-րդ հոդվածները: Պայմանագրի համապատասխան հոդվածները թույլատրում էին բնակչության կամավոր փոխադրում, տասնութից բարձր տարիք ունեցող անձինք կարող էին քաղաքացիություն ընտրել տարածաշրջանի մեկ այլ երկրում, որտեղ նրանք մեծամասնություն էին կազմում: Այդ մարդիկ պահպանում էին իրենց իրավունքը անշարժ գույքի նկատմամբ, բայց պարտավորվում էին մեկ տարվա ընթացքում իրենց շարժական գույքը փոխադրել այն երկիր, որն ընտրել էին: Աճօրինական էր հայտարարվում «Լքյալ գույքի մասին» օսմանյան կառավարության 1915 թ. օրենքը: Թուրքիայում մնացող փոքրամասնությունների պաշտպանությունը, կյանքը, ազատությունն ու հավասարությունը օրենքի առաջ պետք է ապահովվեր կառավարության կողմից: «Պատիժներ» մասում թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքը՝ ռազմական ատյանին հանձնելու պատերազմի օրենքներն ու կանոնները խախտած մեղավոր անձանց, ինչպես նաև նրանց կատարած ոճրագործությունների վերաբերյալ տեղեկություններն ու փաստաթղթերը: Տես «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբ., Եր., 1972, էջ 672-682:

18 Sait Çetinoğlu, Ankaranın ilk kararı: Ermenilerin ülkelerine/ evlerine dönmeleri yasaktır, www.mavidefter.org/index.php?

19 Տես Ibrahim Halil Er, Ermenilerin mallarına ne oldu, <http://agdistanbul.wordpress.com/2007/04/25>

փախստականների Կենտրոնական կոմիտեի միջոցով Ազգերի Լիգային ուղղված բողոքները արդյունք չէին տալիս, քանզի դրանք մերժվում էին Թուրքիայի կողմից: Հայաստանի խորհրդայնացումից հետո դաշնակիցների շահերը այլևս հայերի հետ չէին:

Հայկական գույքի պահանջը լռեցվեց, լռեցվեց նաև Հայկական հարցը:

1925 թ. մեջլիսի որոշմամբ հայ վրիժառուների կողմից սպանված էնվերի, Թալեաթի և Բեհաեդդին Շաքիրի ընտանիքներին պետական թոշակ նշանակվեց, որը վճարվում էր հայկական գույքից ստացված գումարների հաշվին:

1927 -ին «milli şehit» («ազգային հերոս») հայտարարվեցին նաև Բողազլյանի քայմաքան Քեմալ-բեյը և դոկտոր Ռեշադը, որոնք դատապարտվել էին երիտթուրքերի դեմ իրականացված դատավարությունների ընթացքում²⁰:

5. Ունեզրկման վերջին հանգրվանը

Հայերի և հույների գույքի հետագա բռնագանձումը իրականացվեց մի քանի փուլերով.

1942 թ. – Varlık Vergisi – Ունեցվածքի հարկ:

1955 թ. - սեպտեմբերի իրադարձությունների արդյունքում, որոնցից հետո շատերը լքեցին երկիրը:

1963 թ. – 40.000 հույների արտագաղթ:

1974 թ. – Vakıf malları kanunu – Վաքուֆների մասին օրենք:

Այսպիսով, ավարտվեց հողի և ունեցվածքի, Տ. Քույունջյանի բնորոշմամբ՝ «դարի ամենամեծ կողոպուտը»²¹:

Թուրքիայում ի հայտ եկավ նորահարուստ սոցիալական մի խավ. բեռնակիր Հաջի Սաբանջը-ից՝ Սաբանջի ընտանիքը, մանրավաճառ Վեհբի Քոչից՝ Քոչ ընտանիքը և այլն: Ուշագրավ է այն փաստը, որ նույնիսկ Թուրքիայի Հանրապետության խորհրդանիշ, նախագահի նստավայր Չանքայա պալատը տեղակայված է հայերից խլված տարածքում: Կանադայում բնակվող Քասաբյան ընտանիքից ճարտարապետ Էդվարդ Չուխաշյանը նշում է, որ նախկինում իրենց պատկանող Չանքայան որևէ մեկը չի վաճառել: Շենքը և ինչքը իրենցից առնելով՝ 1915 թ. օգոստոսին ընտանիքը դատապարտվում է տեղահանության: «Իմ հայրը, -ասում է նա,- Անկարայում արտասահմանյան ընկերությունում աշխատելով՝ կարողացավ ընտանիքը փախցնել Ստամբուլ: Քեչիյորենում ունեինք մի գեղեցիկ մեծ այգի և առանձնատուն: 15 տարի առաջ տեսա մեր տան նկարը քերթերից մեկում և տեղեկացա, որ այժմվա տեր Վեհբի Քոչը այն իր թանգարանն է դարձրել: Մայրս նամակ գրեց նրան, իսկ Քոչը որպես հիշատակ ուղարկեց այդ շենքի գունավոր լուսանկարը: Անկարայում մի կաթուղի եկեղեցի էր կառուցել մեր ընտանիքը, որը քանդեցին»²²:

20 Stü u Neşe Düzel, Neden? Hrnt Dink, www.radical.com.tr/haber.php?/2005/05/23; Ayşe Hür, “Ermeni mallarını kimler aldı?”, www.taraf.com.tr/ayse-hur/makale/2008/02/03

21 Dickran Kouymjian, When does Genocide End? The Armenian Case, Lecture in Sonoma State University, Kouymjian-lecture=property.doc.pdf.

22 Makar Esayan, Kasapyanların Çankaya Köşkü ve Ahmet Rıza Bey, Taraf gazetesi, 12.08.2010.

6. Եզրափակիչ հարցեր ու պատասխաններ

Ամփոփելով, փորձենք պատասխանել մի քանի կարևոր հարցերի.

– Արդյո՞ք ժամանակակից Թուրքիան պատասխանատու է Օսմանյան կայսրությունում իրականացված ոճիրի համար:

Չխորանալով Թուրքիայի իրավահաջորդության, հետևաբար և պատասխանատվության խնդրի մեջ²³, նշենք որ, օրինակ՝ միջազգային օրենքի հայտնի մասնագետ Ալֆրեդ դե Չայասի կարծիքով՝ հանցագործության «պտուղներից» գիտակցաբար օգտվելը նույնպես պատասխանատվություն է առաջացնում²⁴:

– Ինչո՞ւ է Թուրքիան համառորեն ժխտում ցեղասպանության փաստը՝ դրանով իսկ ժխտելով սեփական պատմությունը:

«Թուրք ազգային ինքնությունը» խարսխված է պատմության խեղված ներկայացման վրա: «Հպարտ թուրքը»՝ անկախության համար պայքարի պատմության փոխարեն կուզենա՞ր իրեն տեսնել որպես ժառանգորդ հանցագործի, մարդասպանի, կողոպտիչի: Նրա համար բացարձակ ժխտումը ավելի ձեռնտու է թվում, մանավանդ որ սկսում է զգուշանալ նաև փոխհատուցման խնդրից: Ինչպես նշում է թուրք հրապարակախոսներից մեկը, **այսօր Հայոց ցեղասպանության ճանաչումը նշանակում է ամեն ինչ դնել սեղանին՝ հանրապետությունը, քեմալիզմը, պետությունը, պետական գաղափարախոսությունը, Թուրքիայի ռեժիմը, ղեկավարներին, քաղաքական համակարգը, բանակը, ուսումնական ծրագրերը և այլն**²⁵:

Ուստի՝ Թաներ Աքչամը իրավացի է, երբ պնդում է, որ Թուրքիայի Հանրապետությունը ցեղասպանության արդյունք է:

– Ինչո՞ւ է Թուրքիան կատաղի պայքար մղում տարբեր երկրների խորհրդարաններում Հայկական բանաձևերի ընդունման դեմ և փորձում խնդիրը տեղափոխել «պատմական հարթություն»:

Որովհետև ձգտելով անդամակցել Եվրամիությանը՝ Թուրքիան աստիճանաբար հայտնվում է միության անդամների, այդ թվում՝ այն երկրների իրավական դաշտն ընդգրկվելու գործընթացի մեջ, որոնց օրենսդիր մարմինները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Հետևաբար, առաջ է գալիս անլուծելի հակասություն՝ հայերից թալանված գույքի ու հարստության պահպանման և ցեղասպանության զոհերի ժառանգների փոխհատուցման՝ փաստաթղթերով ապացուցվող պահանջների միջև:

Չարգացումների այս համատեքստում հայության կարևորագույն խնդիրներից մեկն է փորձագիտական մակարդակով Հայոց ցեղասպանության արդյունքում կրած կորուստների փոխհատուցման լուրջ և մանրակրկիտ իրավաբանական հայեցակարգի մշակումը:

23 Տե՛ս Ю. Барсегов, К вопросу о применимости Конвенции к геноциду армян, «Ноев ковчег», N 6(64), июль 2003, <http://genocide.ru/lib/barsegov/question.htm>

24 Տե՛ս Alfred de Zayas, The Genocide against Armenians 1915-1923 and the relevance of the 1948 Genocide Convention, Brussels-Geneva, 2005, p. 27.

25 Տե՛ս Erol Özkoray, Ermeni Soykırımı niçin hâlâ tabu?, KÜYEREL, 10.03.2010.

7. Թուրքիայի Հանրապետության պատասխանատվությունն ապացուցող փաստաթղթեր

Հայտնի է, որ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո տեղահանված հայերն ու հույները տեսականորեն հնարավորություն ստացան վերադառնալ և տեր կանգնել իրենցից խլված ունեցվածքին: Սակայն Թուրքիայում ծայր առած ազգայնական շարժումը, որը նախնական փուլում գործում էր «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության» կոմիտեների տեսքով, փորձում էր պայմանավորվածություններ ձեռք բերել դաշնակիցների հետ՝ հետպատերազմյան Թուրքիայի նկատմամբ ընդունվելիք որոշումները «մեղմելու» նպատակով: Բայց 1919 թ. մայիսի 15-ին հունական զորքերի կողմից Իզմիրի գրավումից և հատկապես 1920 թ. մարտի 16-ին անգլիական դեսանտի կողմից Ստամբուլը վերահսկողության տակ առնելուց հետո, քեմալականները ստիպված էին նոր «հովանավոր» փնտրել՝ ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի:

Ուստի 1920թ. ապրիլի 23-ին Անկարայում իր աշխատանքներն սկսեց Թուրքիայի ազգային ժողովը (meclis-i milli), որի ընդունած առաջին փաստաթղթերից էին՝ «Թուրքիայի հեղափոխական ուժերին» աջակցելու խնդրանքով Լենինին հասցեագրված նամակը և **Թուրքիայի տարածքում հայերի տեղաշարժն արգելող որոշումը:**

Քեմալականները փորձում էին խոչընդոտել պատերազմից հետո հայրենիք վերադառնալ և սեփական ունեցվածքին տեր կանգնել ցանկացող հայերին: Հայերի հնարավոր վերադարձը և իրենցից հափշտակվածը ետ պահանջելու սպառնալիքն էր այն պատճառներից մեկը, որը ստիպեց քեմալականների հանդեպ մինչ այդ անտարբեր քրդական ցեղապետերին 1919 թ. սեպտեմբերին, Սվազի համաժողովի ժամանակ, միանալ նրանց: Ուստի պատահական չէ, որ Քեմալ Աթաթուրքի գլխավորած Անկարայի ինքնակոչ իշխանության առաջին իսկ որոշումներից մեկը, պատճառաբանելով հայերի «վտանգավոր» լինելը, արգելեց նրանց ազատ տեղաշարժը, ինչը ցեղասպանության ենթարկված ժողովրդի բեկորներին վերջնականապես գրկեց տուն վերադառնալու և սեփական ունեցվածքին տեր կանգնելու հնարավորությունից:

Ստորև հրապարակվում են հայերի ունեզրկման գործընթացում Թուրքիայի Հանրապետության պատասխանատվությունն ապացուցող հետևյալ փաստաթղթերը:

1. **Անկարայի կառավարության՝ հայերի հայրենիք (տուն) վերադառնալու արգելքի մասին որոշման բնագիրը, որի տակ առկա է անձամբ Քեմալ Աթաթուրքի ստորագրությունը:**

2. **Քեմալ Աթաթուրքի ստորագրությունների պաշտոնապես հրապարակված ցանկը, որի հետ համեմատությունը հաստատում է թիւ 1 փաստաթղթի տակ նրա ստորագրության առկայության փաստը:**

3. **Անկարայի կառավարության՝ հայերի հայրենիք (տուն) վերադառնալու արգելքի մասին որոշման տառադարձումը՝ օսմաներենից արդի թուրքերենի:**


4. **Նույն որոշման հայերեն թարգմանությունը:**

5. **Քեմալականների՝ Սվազի համաժողովից պահպանված լուսանկարը, ուր**

պատկերված է Քեմալ Աթաթուրքը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ ակտիվ դերակատարություն ունեցած և հայերի ունեցվածքը բռնագրաված քուրդ ցեղապետերի հետ:

No.1

Անկարայի կառավարության՝ հայերի հայրենիք (տուն) վերադառնալու արգելքի մասին որոշման բնութագիրը (Sait Çetinoğlu, Ankara'nin ilk kararı: Ermenilerin ülkelerine/evlerine dönmeleri yasaktır, www.mavidefter.org)



* Շրջանակի մեջ առնված է Մուսթաֆա Քեմալի ստորագրությունը:

No.2

Աթաթուրքի ստորագրություններն ու կնիքը (Türk İnkilâbı KKEF Sosyal Bilgiler
öğr. <http://bahardilek.wordpress.com>)



* Կյանքի տարբեր շրջաններում և պաշտոններում Աթաթուրքն ունեցել է զանազան ստորագրություններ: Շրջանակի մեջ առնված է Մուսթաֆա Քեմալի՝ վերոհիշյալ ժամանակահատվածին բնորոշ արաբատառ ստորագրություններից մեկը, որն առավել մոտ է թիվ 1 փաստաթղթում առկա ստորագրությանը:

No. 3

Անկարայի կառավարության` հայերի հայրենիք (տուն) վերադառնալու արգելքի մասին որոշման տառադարձումը ժամանակակից թուրքերենի (Sait Çetinoğlu, Ankara'nin ilk kararı: Ermenilerin ülkelerine/evlerine dönmeleri yasaktır, www.mavidefter.org)

Muamelesi ikmal edilmiştir

Dahiliye Vekaleti'nin 14 Haziran 336 tarih ve 769 numaralı tezkeresi hey'etimizce lade'lkıraa dahilde bulunan Ermenilerin takım takım İstanbul ile bazı sevahile geçerek eli silah tutanların ecnebler tarafından teslih ve İslamlar üzerine taslit eylediği anlaşıldığından bunlardan hiçbirinin serbesti-i yer

ve seyahati münasip görülmemiş keyfiyyetin ol vecle tebliği karar-gir olmuştur.

18 Haziran 336 (18 Haziran 1920)

Hariciye Vekili namına
(imza)

Dahiliye Vekili
Hakkı Behiç Bey (Bayiç)

Adliye Vekili
Celalettin Arif Bey

Müdaafai Milliye Vekili
Fevzi Paşa (Çakmak)

Umûr'ı Şer'ıye Vekili
Mustafa Fehmi Efendi (Gerçeker)

Büyük Millet Meclisi Reisi
Mustafa Kemal Paşa

Erkân-ı Harbiye-i Umumiye Reisi
İsmet Bey (İnönü)

Sıhhiye Vekili
Adnan Bey (Adıvar)

İktisad Vekili
Yusuf Kemal Bey (Tengirşenk)

Nafia Vekili
İsmail Fazıl Paşa (Cebesoy)

Maarif Vekili
Dr. Rıza Nur Bey

Maliye Vekili
(imza)

BCA 030.18.11/01.04.10

* Օսմաներեն տեքստի թուրքերեն տառադարձումը ներկայացված է նշված կայքէջում:

No.4

Անկարայի կառավարության՝ հայերի հայրենիք (տուն) վերադառնալու արգելքի մասին որոշման հայերեն թարգմանությունը: (Sait Çetinoğlu, Ankara'nin ilk kararı: Ermenilerin ülkelerine/evlerine dönmeleri yasaktır, www.mavidefter.org):

*Պեղական արխիվների Գլխավոր վարչություն
Հանրապետական արխիվ^a*

Փաստաթղթերի ձևակերպումը դադարեցվում է

Մեր հանձնաժողովը, ծանոթանալով Ներքին գործերի նախարարության հունիսի 14/336 թվագրված համար 769 գրությանը, հաշվի առնելով, որ մոտակա բնակավայրերում գտնվող հայերը խումբ-խումբ Ստամբուլից անցնում են սահմանը, նրանցից զենք կրելուն ընդունակները օտարների կողմից զինվում և չարամիտ ոտնձգություններ են կատարում մուսուլմանների հանդեպ, որոշում է և տեղեկացնում, որ տվյալ հանգամանքներում նրանցից ոչ մեկի ազատ տեղաշարժը կամ ճանապարհորդությունն այսուհետ նպատակահարմար չի դիտվում:

18 հունիսի 336 (18 հունիսի 1920)^b

Արտաքին գործերի նախարարի անունից՝	ստորագրություն ^c
Արդարադատության նախարար՝	Ջելալեդդին Արիֆ բեյ
Շարիաթական գործերով նախարար՝	Մուսթաֆա Ֆեհմի էֆենդի (Գերչեքեր) ^d
Գլխավոր շտաբի պետ՝	Իսմեթ բեյ (Ինյոնյու)
Էկոնոմիկայի նախարար՝	Յուսուֆ Քեմալ բեյ (Թենգիրշենք)
Կրթության նախարար՝	Դոկտոր Ռզա Նուր բեյ
Ներքին գործերի նախարար՝	Հաքքը Բեհիշ բեյ (Բայիշ)
Ազգային պաշտպանության նախարար՝	Ֆելվի փաշա (Չաքմաք)
Ազգային Մեծ Ժողովի նախագահ՝	Մուսթաֆա Քեմալ փաշա
Առողջապահության նախարար՝	Ադնան բեյ (Ադըվար)

Հասարակական աշխատանքների նախարար՝	Իսմաիլ Ֆազլ փաշա (Ջերեսոյ)
Ֆինանսների նախարար՝	ստորագրություն

030.18.01.01/01.04.10 Հայերի տեղաշարժը արգելվում է^e

a Թիվ 1 փաստաթղթի վերևի մասում առկա արխիվի կնիքը:
 b Փաստաթուղթը թվագրված է հիջրեթի տոմարով, փակագծերում բերված է տարեթիվն ըստ Գրիգորյան օրացույցի:
 c Թիվ 1 փաստաթղթում առկա անընթեռնելի ստորագրություն:
 d Փակագծերում ներկայացված ազգանունները թիվ 1 փաստաթղթում բացակայում են: Այդ ազգանունները թվարկված թուրք քաղաքական գործիչները ստացան 1934 թ. «Ազգանունների մասին» օրենքի ընդունումից հետո, ուստի նշվում են՝ նրանց նույնականացնելու նպատակով:
 e Թիվ 1 փաստաթղթի ներքևի մասում առկա արխիվի ձեռագիր նշումները: **Փաստաթուղթը թարգմանվել է մեր կողմից,- Ա.Յ.:**



1919 թ. Սվազի համաժողովի մասնակիցները: Մուստաֆա Քեմալը՝ քուրդ ջարդարար ցեղապետերի շրջապատում:

Summary

**KEMAL ATATURK AND THE PROCESS OF THE
ARMENIANS' WEALTH SEIZING,**

in light of the elucidations of Turkish documents and publications

Anush R. Hovhannisyan

The Armenian wealth was seized by the Young Turk government in 1915. The money, comprised of the sequestered property of the murdered or forcibly deported Armenians, was moved out of Turkey and placed in Austrian and German banks. After the war, in an official memorandum presented to the British Prime Minister, there was information that the sum of 5,000,000 Turkish gold pounds (equaling to about 30,000 kilograms of gold), deposited in the Reichsbank of Berlin by the Turkish government in 1916 and taken over by the Allies after the Armistice, was largely Armenian money. After the forced deportation of the Armenians in 1915, their current and deposit accounts were transferred to the State Treasury in Constantinople by government order. Most of the movable property was looted by mobs and the houses, farms, lands, and shops were sold at a fraction of their value by the members of the special committees on the Armenians' "abandoned property" to friends, and the money was either kept by

committee members or sent to the Central Treasury. In addition to the slaughter and expulsion of more than 1.5 million souls, the Turkish government stole Armenian assets, seized Armenian property, and destroyed Armenian historical monuments. According to Dickran Kouymjian: “These actions collectively represent an enormous illegal transfer of individual and community wealth from the Armenian to the Turkish and Kurdish population through a carefully planned crime.”

The question of “abandoned property” was again underlined in article 144 of the Treaty of Sèvres of August 1920. Provision was made for: 1) the cancellation of the law of 1915 relating to “Abandoned Property”; 2) the return of the Armenians to their homes; and 3) the restoration of businesses and all movable and immovable property. Commissions of arbitration were to be appointed by the Council of the League of Nations to consider the Armenian claims. Even if former Ottoman subjects (i.e. the Armenians) had acquired citizenship in new countries, their property and interests in Turkey were to be restored in their original condition.

Of course, these have never been implemented; even worse, the Turkish government began to issue new laws of confiscation. The 1922 Ankara Agreement with France, protecting the Armenian property in Cilicia after the French withdrawal, was made a mockery by a new Turkish law confiscating all “abandoned” property in the areas “liberated” from the enemy. A year later, on 15 April 1923, just before the signing of the revised Peace Treaty of Lausanne, a new regulation, the “Law of Abandoned Properties”, called for the seizure of all possessions of the Armenians no longer living in Turkey, whatever the reason or the circumstances of their departure was. The Treaty of Lausanne signed in July 1923, nevertheless, provided and still provides protection to the minorities, on condition that they are citizens of Turkey. But nothing prevented Turkey from depriving certain minority groups of their citizenship. The Turkish government, in the wake of its success at Lausanne and the virtual burying of the Armenian question, promulgated still another law in September of the same year which forbade the “emigrated” Armenians from Cilicia and the Eastern provinces from returning to Turkey. In August 1926, the Turkish Government publicly declared it would keep all property confiscated before the entry in force of the Treaty of Lausanne, that is 6 August 1924. In May 1927, a governmental law authorized the exclusion of Turkish nationality to anyone who had not taken part in the War of Independence and remained abroad between 24 July 1923 and 27 May 1927. This essentially sealed the fate of the Armenian claims for confiscated property. Protests to the League of Nations by the Central Committee for the Armenian Refugees from 1925 to 1928 were never acted on and rejected by Turkey. The interests of the Allied Powers were no longer with Armenia, already sovietized. The Diasporian Armenians and their friends represented a little more than a moral force easily ignored. The Armenian property claims were forgotten along with the Armenians. Thus, as D.Kouymjian emphasizes, the Turkish Republic finished the work started by the Ottoman government adding to the horror of the first genocide of the century, the final touches to one of the greatest thefts of wealth and land in our time.

The problem of the Armenian “abandoned property” is being actively discussed in the Turkish mass-media in the last years. The article analyses the recent Turkish publications on the subject in view of the personal participation and role of Kemal Atatürk in the seizure of the Armenian wealth. In the Appendix, one of the first acts of the newly formed kemalist government is presented. It’s a decision prohibiting the return of the deported Armenians to their homes.